ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«20»«Սեպտեմբերի»2016Թ

ԼՄԱՀ № 124

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Պ-ՐՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 2016թ – ի Սեպտեմբերի 19 – ի թիվ 33, 34-Ն, 35-Ա, 36 որոշումները:

Առդիր՝ 7 թերթ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ - Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 - Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 12 - րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 2016թ - ի սեպտեմբերի 19 - ի նիստի օրակարգը

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՄԼԵՏ ԱՂՎԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. «ԱՐԵՎԱՇՈՂԻ ՕՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի 24 - րդ կետով՝

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել

1) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը համաձայն թիվ 1 հավելվածի

2) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» վկայականի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման գրքի ձևը համաձայն թիվ 3 հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության և գրանցման համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված N 1
Արևաշող համայնքի ավագանու
2016 թվականի Սեպտեմբերի 19-ի
Թիվ 34-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին (հետագայում՝ քաղաքացիներ) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը:
2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է Արևաշող համայնքի ավագանու կողմից, համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ սույն կարգին համապատասխան:
4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը կարող են արժանանալ, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, քաղաքական կամ այլ հայացքներից այն քաղաքացիները, որոնք
   1) իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և (կամ) բացառիկ մեծ վաստակով նպաստել են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում
   2) մեծ ավանդ ունեն համայնքային շինարարության, արդյունաբերության, քաղաքաշինության, ճարտարապետության, զինվորական և ոստիկանական ծառայության, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում,
   3) մեծ ներդրում ունեն համայնքում և նրա սահմաններից դուրս Արևաշող համայնքի հեղինակության բարձրացման գործընթացում, այդ թվում մասնակցել են հայրենիքի պաշտպանության համար մղվող ռազմական գործողություններին, բնական տարերային և տեխնածին աղետների հետևանքների վերացման աշխատանքներին
5. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը կարող է շնորհվել տարեկան միայն 1 անձի:
6. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող անձի համաձայնությունը պարտադիր է:
7. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, Հայ Առաքելական եկեղեցին, պետական կառավարման մարմինները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:
8. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարին:
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է ընդունում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացուն, հանդիսավոր պայմաններում հանձնվում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու» վկայականը:
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու վկայականը ստորագրում և կնքում է Արևաշողի համայնքի ղեկավարը:
12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Արևաշող համայնքապետարանում պահվող, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում:
13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի. պատվավոր քաղաքացուն հանձնվող վկայականի և հաշվառման հատուկ գրքի ձևերը հաստատում է համայնքի ավագանին:
14. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» ճանաչված անձիք սեփական անվան հետ հրապարակայնորեն կարող են օգտագործել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու» կոչումը:
15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու որոշումներով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել արտոնություններ,
16. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու անձի մահվան դեպքում նրա վկայականը կարող է որպես հիշատակ պահվել նրա ժառանգների մոտ կամ վերջիններիս համաձայնությամբ և Արևաշողի համայնքապետի գիտությամբ հանձնվել թանգարաններին:
17. Եթե «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» ճանաչված անձը չունի ժառանգներ, ապա նրա մահվանից հետո նրա վկայականը վերադարձվում է Արևաշողի համայնքապետարանի աշխատակազմ:
18. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը կորցնելու դեպքում դրա կրկնօրինը «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի» ճանաչված անձանց հանձնում է Արևաշողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնքի
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սահակյան

Հավելված N 2
Արևաշող համայնքի ավագանու
2016 թվականի Սեպտեմբերի 19-ի
Թիվ 34-Ն որոշման

ՁԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ՎԿԱՅԱԿԱՆԻ

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ №___ Անուն, ազգանուն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ Շնորհված է Արևաշող համայնքի ավագանու ----------թ. թիվ. – Ա որոշմամբ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------- Անուն, ազգանուն *Ստորագրություն, կնիք*	AREVASHOGH COMMUNITY CERTIFICATE №___ Name, last name HONOURABLE CITIZEN OF AREVASHOGH COMMUNITY REPUBLIC OF ARMENIA REGION LORI AWORDED BY THE DECISION OF THE COUNCIL OF THE ELDERS OF AREVASHOGH ---------- № - A COMMUNITY LEADER ---------- Name, last name Signature, seal

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնքի
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սահակյան

Հավելված N 3
Արևաշող համայնքի ավագանու
2016 թվականի Սեպտեմբերի 19-ի
Թիվ 34-Ն որոշման

ՁԵՎ
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման գրքի

Հ/հ	Հ.Հ. Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացի ճանաչված անձի անունը, ազգանունը, հայրանունը	Հ.Հ. Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու կոչում ստանալու ամսաթիվը, ամիսը, թիվը	համայնքի ավագու որոշման ամսաթիվը, ամիսը, թիվը	Հ.Հ. Լոռու մարզի Արևաշող համայնքի պատվավոր քաղաքացու վկայականի համարը

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնքի
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35-Ա

ՀԱՄԼԵՏ ԱՂՎԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 16 - րդ հոդվածի 24 - րդ կետով և Համայնքի ավագանու 2016թ - ի Սեպտեմբերի 19 - ի թիվ 34 որոշմամբ հատատված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ Համլետ Աղվանի Խաչատրյանին շնորհել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչ Համլետ Աղվանի Խաչատրյանին հանձնել սույն որոշման կրկնօրինակը և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման վկայականը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36

«ԱՐԵՎԱՇՈՂԻ ՕՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 11 - րդ հոդվածի 5 - րդ պարբերությամբ, Իրավական Ակտերի մասին օրենքի 34 - րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսվա վերջին կիրակի օրը նշել որպես «Արևաշողի օր» ամենամյա համայնքային տոն:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության և գրանցման համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ